

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝

ԷԴՌԻԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ներկա համաժողովի արդեն իսկ առաջին զեկուցումներում տազնապի ձայներ հնչեցին: Տազնապ, որը սլեաք է սթափեցնի և ըարձրացնի հայ պատմագիտութեան պատվավոր, սակայն և ծանր ըեռը կրող գիտնականների պատասխանատուութիւնը հայ ազգի առջև ծառացած խնդիրների լուծման մեջ իրենց խոսքն ասելու գործում: Ազգային խնդիրներ, որոնք դարեդար կուտակվելով, ըստ իրենց ժամանակաշրջանների, անցել են պատմագիտութեան ոլորտը, սակայն իրենց հնչեցութիւնը և ազդեցութիւնը չեն կորցրել հաշորդ սերունդների քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հետագա ընթացքում:

Այսօր շատ է խոսվում ազգային միարանութեան մասին, առաջարկվում է ստեղծել համաշխարհային, համահայկական գիտական կենտրոն կամ հասարակական-մշակութային նոք կառույցներ: Իսկ արդյո՞ք հետազոտվել են մեզ, հայերիս, դարեր շարունակ սլառակտող ներքին միտումները, որոնք միշտ պարարտ հող են ստեղծել արտաքինից եկող միջամտութիւնների համար: Հետազոտութիւններ, որոնք ոչ թե կտանեն դեպի հոռետեսութիւն կամ ազգային ինքնամերժում, այլ ծառացած խնդիրների լուծման հրամայականով՝ գիտական հետազոտութիւններով հնարավորութիւն կրնձեռեն ախտորոշել արատավոր երևութները, վերհանել ազգասլան գործոնները, և աշխարհաքաղաքական փոփոխվող պայմաններում, որպես ներքին կայունութեան երաշխիքներ, իմաստավորել և կիրառել դրանք:

Հայոց ազգային հողի վրա հետազոտութիւնների այս ասպարեզը պատկանում է հայագիտութեանը, որում հիմնարար տեղ ունի պատմագիտութիւնը: Այս գործի արժեքները կարևոր նախապայմանն է ազգային և համամարդկային արժեքների ներդաշնակ ընկալումը, ինչին կարելի է հասնել դրանց ճշմարիտ բացահայտմամբ ու ներկայացմամբ: Խոսքը հատկապես վերաբերում է քաղաքական և դիվանագիտական փորձի, ռազմական արվեստի, հոգևոր և նյութական մշակութի հսկայական սլաշար պարունակող հին Հայաստանի պատմութեանը:

Հայոց հին պատմութեան ուսումնասիրութիւնը սկզբնապես խարսխված էր հայ պատմագրութեան հիմնադիր՝ Մովսես Խորենացու կողմից հիմնարար կերպով մշակված, հազարամյակների խորքից եկող հայոց գաղափարաբանական սկզբունքների վրա: Առաջինը Պատմահայրն էր, որ V դ. իրականութիւնից հայոց ամբողջական պատմութեանը մոտեցավ հայագիտական հայեցակարգով: Նա հիմնարար խնդիր գրեց՝ պատմագրել

\* Զեկուցում կարգացված «Հայագիտութեան արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովում, Երևան, 15-20-ը սեպտեմբերի:

Հայոց անցյալը, քանզի «բազում գործք արութեան դտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...», սակայն և իր գիրքն ավարտեց «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն...»: վերջնամասով, որն իր ողջ բովանդակութեամբ մարգարեական ահագանգ էր դարերի մշուշից վրա հասնող ազգային աղետը կանխելու համար:

Հնագիտական հսկայական նյութը վկայում է Մովսես Խորենացու ճշմարտացիութունը Հայկական լեռնաշխարհում Հայոց ազգային ակունքների իմաստավորման հարցում: Նրա պատմագիտական հայեցակարգից է սնվում Հայագիտական դաղափարաբանությունը: Դարերի ընթացքում այն գիտականորեն սնեց Հայ պատմիչների և պատմագետների, փիլիսոփաների ու աստվածաբանների նոր սերունդներին, որոնք լրացնելով և խորացնելով կենդանի պահեցին Հայագիտական հայեցակարգը սնող Մովսես Խորենացու խոսքը:

Այդ հսկայական ժառանգությունը նոր ժամանակներում դարձավ հասարակական գիտությունների և հատկապես պատմագիտության քննարկման առարկա: Ժամանակները փոխվում են, փոփոխվում են նաև քաղաքական համակարգերը, սոցիալ-հասարակական պահանջարկը և մտավոր ասպարեզը: Առանց որևէ նախապաշարման, կարելի է ասել, որ Մովսես Խորենացու «Ողբ»-ում արձանագրված արատավոր երևույթներն ազգովի չբուժելու և Հայ հասարակությունից չհեռացնելու պատճառով, զարեգար քարչ տրվեցին և գրոհող ոսոխի կողմից անթաքույց հրահրման ու միջամտության սլայմաններում՝ իշխանատենչ դավաճանների ներքո՝ մաս առ մաս Հայրենյաց հողերի կորստի և Հայ ժողովրդի հսկայական ողբերգությունների պատճառ եղան:

Ուրեմն՝ խորհնացիական պատմական հայեցակարգը նաև սնում է ազգապահպան գաղափարախոսությունը, որը յուրաքանչյուր դարաշրջանում ծրագրային փոփոխություն կարող է կրել՝ պատմական իրավիճակին համապատասխան:

Ժամանակի ընթացքում Հայագիտական հայեցակարգի կողքին սկսեցին առաջանալ նաև այլ հայեցակարգեր՝ թելադրված Հայ հասարակության բնականոն զարգացումներին խորթ պետական համակարգերի և ուժերի քաղաքական ճնշման հետևանքով գիտական մեթոդաբանության արհեստական փոփոխությամբ: Այստեղից էլ այն հայեցակարգային հակասությունները և շեղումները Հայագիտությունից, որ դրսևորվում են պատմագիտության տարբեր ճյուղերում:

Այսօր կարևոր խնդիր է Հայոց Հին պատմության հետազոտության բնագավառում Հայագիտության ոգով կուտակված ճշմարիտ հայեցակարգային մոտեցումների վեր հանումը և խորացումը:

Եթե սկզբնական ժամանակաշրջանում հետազոտությունները հիմնականում ընթանում էին անտիկ և Հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրության, թարգմանության և դրանց ծանոթագրության ու մեկնությունների ճանապարհով, ապա՝ Հնագիտական նյութերի և Արարատյան-Վանի բիայնական սեպագիր արձանագրությունների շրջանա-

<sup>1</sup> Մովսեսի Խորենացույ Պատմութիւն Հայոց. Երևան, 1991, էջ 10, 358-366:

ուղթյան մեջ դրվելով, աշխատանքները շարունակվեցին հայոց պատմութ-  
յանը վերաբերող մենագրությունների և ընդհանրացանող աշխատութ-  
յունների ստեղծմամբ, շեշտադրված տարբեր դարաշրջանների սկզբնաղբ-  
յունների հետադոտություն աստիճանից բխող հայեցակարգային մոտե-  
ցումներով:

XIX դ. վերջից և հատկապես XX դ. ընթացքում գիտական հետաքրք-  
րություններին հաճախ սկսեց գումարվել քաղաքական ու գաղափարախո-  
սական պատվերը, ինչը փոխակերպում էր հայագիտության և հատկապես  
պատմագիտության մեջ մշակված և, նոր նյութերի հայտնաբերմամբ, ի-  
րենց խորացմանը սպասող հիմնադրությունները: Շեղումը իրական հայագի-  
տական հետադոտությունների ուղուց ոչ միայն չի նպաստում, այլև՝ խո-  
րացող միտումով, խեղաթյուրում է հայ պատմագիտության ասպարեղում  
և դաժնե ձեռքերումները:

Այստեղ խոսքը ոչ թե գիտական տարակարծության մասին է, ինչը  
բնականորեն սլետք է գոյություն ունենա գիտական հետադոտություննե-  
րի ասպարեղում, այլ առաջին հայացքից գիտական թվացող, բայց իրա-  
կանում դարաշրջաններ կլանող և հայոց պատմությունն անարմատ թող-  
նող՝ կեղծ գիտականության է վերաբերում: Բնականոն ճանապարհով  
դժվարին, կնճռոտ հարցերի առաջացմամբ և դրանց չլուսաբանմամբ  
հսկայական ընդհանրությունների դուրս նետումը ազգային պատմության աս-  
պարեղից ոչ թե գիտական քննադատության և դրանով իսկ բազմակար-  
ծության, այլ անհարկի գերքննադատությամբ՝ մերժողական մոտեցման  
դրսևորում է:

Հայոց հնագույն պատմության պարբերացումը, ըստ Հայկազունիների  
արքայատոհմի ճյուղավորումների, ընդգրկում է վաղ, միջին և ուշ ժամա-  
նակաշրջանները, այսինքն պատմաքաղաքական աշխարհագրության տե-  
սանկյունից, խոսքը միասնական ամբողջական տարածքում՝ Հայկական  
լեռնաշխարհում մի քանի հազարամյակների ընթացքում Հայք-Արմենիա  
և Արարատ էթնո-հոգևոր-աշխարհագրական հասկացությունները սլարու-  
նակող՝ Արատտա, Արմանում, Հայասա, Արարատ (Ուրարտու)-Բիայնա  
(Վան), Մեծ Հայք և Փոքր Հայք անունները կրող թագավորությունների  
մասին է: Եվ այս ամբողջը հիմնավորվում է ինչպես հնագիտական նյու-  
թերով, այնպես էլ սեպագիր, անտիկ և վաղմիջնադարյան գրավոր  
սկզբնաղբյուրներով:

Այնպես որ խնդիրը, հայագիտական մոտեցումներով պայմանավորված,  
հայեցակարգային բնույթի է, այլ ոչ թե քմահաճ նախասիրության, ինչ-  
պես հնչեց ներկա գիտաժողովի բարձր ամբիոնից. խնդիրը համարյա  
հասցնելով զոհի բարդություն կարգավիճակի, ասելով, թե՛ «որոշ հեղինակ-  
ներ այն տեսակետն էին պնդում, որ անհրաժեշտ է առաջնահերթությունը  
տալ հայ ժողովրդի իրավունքներին՝ ցուցանելով հայկական գրեթե ամեն  
ինչի բնիկ էությունը: Որևիցե ակնարկ առ այն, թե հայ ժողովուրդը կա-  
րող է կազմավորված լինել բազմաթիվ տեղաշարժերի և նախկինում գո-  
յություն ունեցած ցեղերի հետ խառնվելու երկարատև գործընթացում,  
համարվում էր հայերի իրավունքների հանդեպ ոտնձգություն և սպառ-  
նալիք Հայ դատին: Ուրարտուն կարող էր լինել ոչ այլ ինչ, եթե ոչ հայ-  
կական թագավորություն, իսկ բնիկ հայերը սլետք է ծագած լինեին քրիս-

տոնեական շրջանից դեռ շատ հազարամյակներ առաջ: Ցանկացած ոք, ով կասկածում կամ քննարկում էր այս անսակեռները, դիտվում էր որպես թշնամի (եթե նրանք հայ չէին) կամ դավաճան (եթե նրանք հայ էին): Նրանք թուրքերի և Աբրահամյանի գործակալությունների և կեղծարարների ձեռքին խաղալիք էին կամ ծառայում էին նրանց շահերին...»<sup>2</sup>:

Չպետք է մեղանչել ճշմարտության առջև: Առ այսօր հենց Հայաստանի Հանրապետությունում լույս են տեսնում մենագրություններ, դասագրքեր և հոդվածներ, որոնցում Ուրարտուն չի համարվում հայկական, իսկ հեղինակները ոչ մի «պարսավանքի», կամ «քաղաքական հետապնդման» չեն ենթարկվում: Օրինակ, հենց վերջերս Հոռոմում լույս տեսավ հայ-իտալական համատեղ հետազոտությունների արդյունքը ներկայացնող գիրքը «Հյուսիս-արևելյան սահման. Ուրարտացիները և ոչ-ուրարտացիները Սևանա լճի ավազանում»<sup>3</sup>: Ինչպես կարելի է տեսնել այդ ծավալուն գրքի վերնագրից և բովանդակությունից, այն արմատականորեն չի վերաբերում հայերի հին պատմությանը, և կարծես թե այդ միտքը ամրագրելու համար օգտագործվել է «ոչ-ուրարտացիներ» անհեթեթ արտահայտությունը, որը և տեղիք է տվել հեռույն մտքերին, որոնք գրքի նման շքեղ հրապարակումը անիմաստ են դարձնում հայագիտության համար:

Հեղինակները գրել են. «Փաստորեն, ուրարտական նյութական մշակույթը թվում է, թե առանց ընդհատումների հեղհեղան անհետանում է աքեմենյանի մեջ, և խորապես ազդել է նաև հետագա ժամանակաշրջանների վրա: Ուստի հայ-իտալական արշավախումբը ուսումնասիրում է Սևանա լճի ավազանը վաղ բրոնզի դարից մինչև հուսիսային ժամանակաշրջանը ներառյալ...»<sup>4</sup>, «... ուղ ուրարտական մակարդակներ... խառնվում են վաղ հայկական ժամանակաշրջանին (ուղ VII դ. – վաղ IV դ.): Սա կարող էր վկայություն լինել, որ ուրարտական մշակույթը և սիրապետությունը հետզհետե անհետսպան աքեմենյանի մեջ առանց ողբերգական տեղաշարժերի, և ուժեղ շարունակականություն է ցուցաբերում նաև մակերեսի նյութը: Վաղ հայկական, հելլենիստական և հուսիսային ժամանակաշրջանների խեցեգործությունը և ճարտարապետությունը ուժեղ շարունակականություն են ցուցաբերում ուրարտական մշակույթի հետ: Փաստորեն, մեր առջև է մ.թ.ա. VII–IV դարերի նյութական մշակույթի համարյա նույնականության խնդիրը և որոշ ասպեկտներ շարունակվում են մինչև քրիստոնեական դարաշրջան...»<sup>5</sup>: «Անհեթեթ կլիներ անջատել ուրարտական ժամանակաշրջանը ենթաստեղծությունից և այն ուսումնասիրել մեկուսացված, խզելով կարևոր կասկերը վաղ երկաթի դարի և խիստ շեղված շարունակականությունը աքեմենյան և հելլենիստական դարաշրջանների հետ»<sup>6</sup>:

<sup>2</sup> Ռ. Գ. Հ ո Վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայագիտությունը՝ խաչմերուկում: Հիմնախնդիրը. – «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները», Միջազգային համաժողով. Երևան, 2003, էջ 3-4:

<sup>3</sup> "The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin". Edited by Raffaele Biascione, Simon Hmayakyan, Neda Parmegiani. Roma – "Documenta Asiana", vol. VII, 2002.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 14:

Նույն գրքում ղետեղված քարտեզում<sup>7</sup>, որն անվանված է «Ուրարտական նվաճումները Արաքսից հյուսիս», տեղանունների և գետանունների խառնաշփոթ է: Օրինակ հայերեն Եփրատ ու Արածանի գետանունների, Մանազկերտ ու Բերկրի քաղաքների անունների փոխարեն նշված է՝ Կարասու և Մուրատսու, Մալաղգիրտ և Մուրադիե և այլն:

Թվում է, թե վերը բերված տողերի կապակցությամբ մեկնաբանությունները մի ստվար հատոր կկազմեին: Այստեղ միայն տեսնենք, թե ու՞ր կարող է տանել նման շարագրանքը: Եթե ուշադրություն դարձնենք, որ հայ-իտալական այդ արշավախումբը կաղմակերպված էր մի կողմից ՀՀ ԳԱԱ Հնագիտության ինստիտուտի, իսկ մյուս կողմից Միկենյան, Էգեյան և Անատոլյան ուսումնասիրությունների կենտրոնի կողմից, ապա կարելի է տեսնել, թե ի՞նչ ուղղություն վրա է կենտրոնացվում և ամբողջացվում տասնամյակներ շարունակ արհեստականորեն հայագիտությունից օտարացվող, «ուրարտագիտության» արգասիք հանդիսացող, հարյուրավոր գրքերի և հոդվածների ներկայիս պատկերը:

1995–1998 թթ. չորս անգամ վերահրատարակվել է Ա. Կուհրտի «Հին Մերձավոր Արևելք»<sup>8</sup> երկհատորյակը: «Ուրարտուին» վերաբերող ամբողջ բաժինը դրված է երկրորդ հատորի «Անատոլիա» վերնագիրը կրող 10-րդ գլխի մեջ, որը սկսվում է այսպես. «Անատոլիայում Ասորեստանյան կայսրությանը սահմանակից, մի քանի կարևոր պետություններ (Ուրարտու, Փոյունգի, Լյուդիա) զարգացան առաջին հազարամյակի առաջին կեսում»:

Պետք է նշել, որ «Հյուսիս-արևելյան սահման. Ուրարտացիները և ոչ-ուրարտացիները Սևանա լճի ավազանում» գրքի հեղինակները ի տարբերություն Ա. Կուհրտի, «Ուրարտական կայսրության» տեղադրությունը նշել են ոչ թե «Անատոլիայում»<sup>10</sup>, այլ “the Armenian plateau”-ում («Հայկական բարձրավանդակ կամ սարահարթ»)<sup>11</sup>: Այնինչ ավելի ճիշտ է ասել Հայկական լեռնաշխարհ – the Armenian Highland, որը բաղկացած է լեռնաշղթաներից, բարձր լեռներից, բարձրավանդակներից, սարահարթերից և այլն:

Իսկ վերջին տարիներին, Բարձր Հայքի՝ Բաբերդի ե. Կարինի շրջանում թուրք-ավստրալիական հնագիտական արշավախմբի կատարած պեղումների արդյունքները, հակառակ այն փաստի, որ ստացվել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան երկրամասից և վերաբերում են հայոց պատմության հնագույն ժամանակներին, հրապարակվում են, որպես «Հյուսիսարևելյան Անատոլիական հնագիտական նախագծի» նյութեր: Ընդ որում, Հայկական Սոսի և Մեծ Բլուր վայրերի էնեոլիթի և բրոնզի դա-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>8</sup> A. Kuhrt. The Ancient Near East. London and New York, 1998.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 547–562:

<sup>10</sup> Հմմտ. P. E. Ziman. Ecology and Empire: The Structure of the Urartian State – “Studies in Ancient Oriental Civilization”. Illinois, 1985, № 41, pp. 1, 15.

<sup>11</sup> “The North-Eastern Frontier...”, p. 15.

րի հնագիտական հուշարձանների աշխարհագրական անունները այդ հրապարակումներում կոչել են թուրքերեն ձևով<sup>12</sup>:

Ոչ մի անգամ Հայաստանը և Հայերը չեն հիշատակվում Կարին-էրզրումի շրջանի հնագիտական պեղումների հին և միջնադարյան մշակութային նյութերին վերաբերվող ժամանակագրական նկարագրության մեջ<sup>13</sup>:

Եվ այսպես շարունակ... Այսինքն Հայկական լեռնաշխարհ հասկացությունը նման հրապարակումներում ի սպառ հանվում է շրջանառությունից:

Այնինչ, գեոևս XIX դ. գերմանացի երկրաբան Հերման Աբիխի (1806-1886) հրատարակումների ժամանակներից Հայկական լեռնաշխարհ երկրաբանական-գեոմորֆոլոգիական-աշխարհագրական տերմինը (*Das Armenische Hochland* կամ *Bergland*) գիտական գրականության մեջ կիրառվում է Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրի և դիրքի առումով: Այս տերմինը ճիշտ է ընտրված նաև հոգևոր և քաղաքական պատմության տեսանկյունից, քանի որ Աստվածաշնչի հին Հայերեն գրաբար թարգմանությունում կարգում ենք՝ «ի լերինս Արարատայ» (Ծննդ. Ը, 5), իսկ անտիկ աղբյուրներում «Հայաստանի լեռներ»<sup>14</sup>:

Երկրաբան Լևոն Զոհրաբյանը իր «Հայկական լեռնաշխարհի լեռնագրությունը» մենագրությունում գիտականորեն համոզիչ կերպով ցույց է տվել, որ «Հայկական լեռնաշխարհը միասնական ծալքաբեկորային հրաբխային երկիր է՝ տեղադրված երեք պետությունների (Նախկին – Է. Դ.) ԽՍՀՄ, Թուրքիայի և Իրանի սահմաններում: Վերջերս առաջացել են շատ անուններ, որոնք վերաբերում են դրա մասերին, ըստ պետական պատկանելության: Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը, որ գտնվում է Թուրքիայի սահմաններում, մինչև (Նախկին – Է. Դ.) ԽՍՀՄ-ի հետ պետական սահմանը, թուրք աշխարհագրական դրականությունում անվանվում է Արևելա-Անատոլիական լեռնաշխարհ... Բայց չէ որ Հայկական լեռնաշխարհը կամ նրա որևիցե մասը երբեք չեն մտել և չեն մտնում Անատոլիայի մեջ, որը զբաղեցնում է Փոքր Ասիայի տարածքը»<sup>15</sup>:

Տիգրան Կուլումջյանը, որը «Հայ ժողովուրդը հին ժամանակներից մինչև նորագույն ժամանակները» անգլերեն երկհատորանի գրքի հեղինակներից է, երկրորդ հատորում գրել է: «Հայաստանը անտիկ դարաշրջանից որոշակի աշխարհագրական ամբողջություն է, երբեմն սխալ կերպով վկայակոչվելով որպես արևելյան Անատոլիա կամ արևելյան Փոքր Ասիա...»<sup>16</sup>:

«Աշխարհի պատմության հանրագիտարան»-ում կարդում ենք. «Փոքր Ասիան կամ Անատոլիան մի թերակղզի է, որը ձգվում է Հայկական լեռներից արևմուտք՝ մինչև էգեյան ծովը, հյուսիսում՝ Սև ծովն է, իսկ հարա-

<sup>12</sup> A n t o n i o S a g o n a. Southern Caucasus at the End of the Third Millenium BC: A New Perspective from Sos Hoyuk, Erzurum.– “The International Conference of Caucasiologists dedicated to the 200<sup>th</sup> birth anniversary of Marie Fehcite Brosset”, 21-25 V 2000, Tbilisi.

<sup>13</sup> The University of Melbourne (ABN: 84 002 705 224) 1994-2001, “The North-Eastern Anatolia Archeological Project”.

<sup>14</sup> The Geography of Strabo, vol. V, Cambr., Mass., London, 1954, XI. II. 15.

<sup>15</sup> Л. З о г р а б я н. Орография Армянского нагорья. Ереван, 1979, с. 14.

<sup>16</sup> The Armenian People from Ancient to Modern Times, vol. II, New York, 1997, p. 1.

վում՝ Միջերկրականը... Մենուան ավելացրեց Ուրարտուի հզորությունը գրավելով ամբողջ Հայկական լեռնաշխարհը»<sup>17</sup>:

Ինչպես ասեսնում ենք, Հայկական լեռնաշխարհ տերմինը լացարձակապես գիտական հասկացություն է, և դրա փոփոխությունը զուրկ է որևէ գիտական հիմքից: Դա չընդունողները այդ կարգով նաև դուրս են մղում հայոց էթնիկական պատմությանը վերաբերող նյութերը և տարբեր նպատակներով «տաբու են» դնում մ.թ.ա. IV–I (առաջին կես) հայարամյակների հայոց պատմության վրա, որով խեղաթյուրվում է հայոց էթնո-հոգևոր պատմության հիմնարար ուսումնասիրությունը:

Աղճատվում է նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի պատմա-աշխարհագրական բնութագիրը:

Ըստ հին և միջնադարյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև նոր ժամանակների աշխարհագրական, երկրաբանական և գեոմորֆոլոգիական գիտական դրականության, Կովկաս հասկացությունը տարածվում է Կովկասի լեռնաշղթայի և դրա ճյուղավորումների ընդգրկած տարածաշրջանի վրա՝ հարավում հասնելով մինչև Կուր գետից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած շրջանները: Ըստ Սարգսոնի (մ.թ.ա. 64/63–23/24 մ.թ.), Կովկասի հարավային ճյուղավորումները հարավում ընդգրկում են Վիրքը և հյուսիսից եզերում են Հայկական լեռները, ինչպես նաև այսպես կոչված Մոսխական լեռները և Կողբիսը: «Հայաստանում է սկիզբ առնում Կուրը և, հոսելով դաշտավայրով, հյուսիսից իր մեջ է առնում Կովկասից հոսող վտակները...»<sup>18</sup>: Հազարամյակներ շարունակ Հայաստանը պատմաաշխարհագրականորեն դուրս է եղել Կովկաս հասկացությունը ընդգրկող որևէ միավորից (Հյուսիսային, Կենտրոնական կամ Մեծ, Հարավային, Արևելյան և Արևմտյան Կովկաս): Այլ հարց է ավելի ուշ ժամանակներում հայերի ներգրումը կովկասյան երկրների տնտեսական և մշակութային կյանքում:

Ըստ անտիկ և միջնադարյան սկզբնաղբյուրների, Հայաստանն ամբողջապես եղել է Հայկական լեռների կամ Հայկական լեռնաշխարհ պատմաաշխարհագրական հասկացությունը ընդգրկող տարածաշրջանի մեջ՝ Կուրի ու Արաքսի, Ճորոխի, Եփրատի ու Տիգրիսի հովիտների ու հարակից Հյուսիսային Միջագետքի հարթավայրերով հանդերձ: Հակամարտող տերությունների միջև Հայաստանի քաղաքական բաժանումները հանգեցրին Արևելյան Հայաստան և Արևմտյան Հայաստան տերմինների առաջացմանը, ընդ որում Արևմտյան Հայաստանը ժամանակի ընթացքում ներկայացրեց երկրի ավելի մեծ մասը:

Կովկասի և «Անդրկովկասի» տարածքներում Ռուսական կայսրության կողմից կատարված նվաճումներից հետո ստեղծվեցին վարչաքաղաքական միավորներ, որոնցում ընդգրկվեց նաև Արևելյան Հայաստանի ղգալի մասը, որը հետագայում հանդես եկավ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասի լեռները նույնպես արհեստականորեն ընդգրկվեցին «Փոքր Կովկաս» հասկացության մեջ: «Անդրկովկասը» խորհրդային կարգերի հաստատմամբ կազմված էր

<sup>17</sup> "The Encyclopedia of World History". Sixth edition, Boston, New York, 2001, p. 37, 39.

<sup>18</sup> S t r a b o, XI.2.15; 3.2.

երեք հանրապետությունների (Հայկական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ) տարածքներից:

Վերջին տարիներին, միջազգային տարբեր կազմակերպությունների մեջ ընդգրկելու խնդիրը առաջնային դարձնելով, Հայաստանի Հանրապետության նկատմամբ արտաքին աշխարհից եկող ազդեցությունները ավելի ու ավելի են ուժեղանում: Իսկ թե ի՞նչ գնով է այդ կատարվում, ցույց են տալիս հենց այն ծրագրերի ծավալը և բնույթը, որոնք գրոհային եղանակով կիրառվում են տարբեր կառույցների և ոլորտների բնագավառներում: Եվ այդ կարգով բավականին արագորեն Հայաստանի Հանրապետությունը և ԼՂՀ-ը ներառնվում են «Հարավային Կովկաս» արհեստակառույցի ստեղծված հասկացության մեջ, որով կարող են ղրկվել իրենց քաղաքական, ինչպես նաև պատմամշակութային և, որպես ամբողջական Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մաս կազմող պատկանելություններից: Իսկ թե դա բացասական ինչ հետևանքներ կունենա, ցույց են տալիս հետևյալ օրինակները:

Նախատեսվում է ստեղծել «Հարավային Կովկասի» անտիկ դարաշրջանի հանրագիտարան, ներկայիս երեք հանրապետությունների քաղաքական սահմաններում: Կարելի է պատկերացնել, որ նման մոտեցման դեպքում Արևմտյան Հայաստանը դուրս է մնում: Իսկ անտիկ դարաշրջանի Հայաստանի սլատմությունը անհնար է պատկերացնել առանց Տիգրանակերտի, Վանի և Արևմտյան Հայաստանի մնացած տարածքների:

Կամ, ըստ մեկ այլ նախագծի, ծրագրվում է ստեղծել «Կովկասի մշակութային ժամանակների միջով» համալսարանական մի «տարածաշրջանային դասընթաց», որում Հայաստանը կրկին արհեստականորեն ներկայացվում է որպես «Հարավային Կովկասի» մաս: Ավելին, անտեսվում է Հայաստանը, որպես քաղաքակրթության բնօրրան լինելու փաստը: Արդեն որերորդ եղեռնադործությունն է կատարվում...

Այս համաժողովում Դենիս Փափազյանի արտահայտած անհանդստությունը՝ Թուրքիայի կողմից ամերիկյան համալսարաններում իրականացվող հայագիտական ամբիոնների գավթմանը ուղղված քաղաքականության վերաբերյալ<sup>19</sup>, լրիվ հասկանալի է դարձնում այն վտանգը, որ կախվել է արտասահմանում գործող հայագիտական ամբիոնների վրա:

Պատմությունը վեր է հանել մի դաժան իրողություն. յուրաքանչյուր դարաշրջանում հայ ժողովրդի առջև ծագած և չլուծված խնդիրները, անկախ այն հանգամանքից, թե սոցիալական որ խավր կամ քաղաքական որ ոլորտն էին ներառում, Հայաստանի նկատմամբ թշնամի ուժերի վարած նվաճողական քաղաքականության պայմաններում, ծանր հետևանքներ էին ունենում ամբողջ ազգի համար:

Այսօր հայ հասարակությունը տազնապալից սպասման մեջ է՝ պատմականորեն ժառանգած և արդի հնչեղություն ունեցող ազգային խնդիրների լուծման հրամայականով: Այդ գործում արդասարբեր արդյունքներ են սպասվում ճշմարիտ հայագիտությունից:

<sup>19</sup> Dennis R. Papazian. The Holdings and Activities of the Armenian Research Center at the University of Michigan-Dearborn and that of the Other Major Institutions and Centers in America. – «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները», Միջազգային համաժողով, Երևան, 2003: